

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/1

29 նոյեմբերի 2013 թ.

Քննարկվեց քաղաքացի Ռուդիկ Քոչարյանի 13.11.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 23.08.2013 թ-ի թիվ 1411293 վարչական ակտի դեմ:

Քաղաքացի Ռուդիկ Քոչարյանի բողոքում բերված փաստարկները.

12.08.2013 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցները կազմել են արձանագրություն առ այն, որ ֆիզիկական անձ Ռուդիկ Արշակի Քոչարյանը առանց պետական գրանցման ՀՀ տարածքում 21.12.2012 թ-ին իրացրել է 2 հատ ասֆալտ-բետոն վերամշակման սարք՝ 15 միլիոն դրամ ընդհանուր արժեքով: Հիմնվելով Ռուդիկ Արշակի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության ՀՀ Տրանսպորտային տեսչության 09.04.2013 թ-ի տեղեկության հիման վրա՝ ապօրինի գործունեության արդյունքում համապատասխան ժամանակահատվածում իրացման շրջանառությունը (համախառն եկամուտը) կազմում է 15 միլիոն դրամ:

Վերոնշյալ արձանագրության հիման վրա 23.08.2013 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչության կողմից կազմվել է թիվ 1411293 վարչական ակտը (առանց նշելու ակտը կազմողի զբաղեցրած պաշտոնը), որի խախտման նկարագրություն բաժնում նշվել է. <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն ենթակա է տուգանքի իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50%-ի չափով, բայց ոչ պակաս 200000 դրամից և որոշում է կայացվել ֆիզիկական անձ Ռուդիկ Քոչարյանին առաջադրել 7500000 դրամ ընդհանուր գումարով հարկային պարտավորություն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1411293 վարչական ակտն անհիմն է, քանի որ կայացվել է նյութական և վարույթային նորմերի կոպիտ խախտումներով, մասնավորապես, արձանագրության մեջ նշված 2 հատ ասֆալտ-բետոն վերամշակող սարքերը ես գնել եմ 2008-2009թթ.՝ որպես անձնական գույք, անսարք վիճակում, կատարել եմ վերանորոգման աշխատանքներ և նպատակ եմ հետապնդել դրանք վարձակալությամբ տրամադրել կամ իմ հիմնադրած <Ռուբոստրոյ> ՍՊԸ-ում ներդրում կատարելու, սակայն ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով 2012 թ-ին դեկտեմբերին որոշել եմ վաճառել, որը և իրականացրել եմ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ Հարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքցիների՝ ա) անձնական գույքի (ներառյալ նաև անշարժ) և իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Այսպիսով, իմ արարքը՝ անձնական գույք գնելը և հետագայում վաճառելը, ոչ մի կերպ չէր կարող համարվել ձեռնարկատիրական գործունեություն և իրավախախտում, հատկապես երբ օրենսգրքում այդ մասին հստակ նշվում է:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի՝ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով

սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմինն հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Տվյալ դեպքում վարչական ակտում բացակայում է գործի որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ նշում: Բացի այդ, նույն հոդվածի 4-րդ կետի «թ» ենթակետի պահանջն է, որ վարչական ակտում պարտադիր նշվի վարչական ակտն ընդունող պաշտոնատար անձի պաշտոնը, որը վարչական ակտում բացակայում է:

Համաձայն նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին կետի ա ենթակետի՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով: Այս դեպքում սխալ է կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում եմ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1411293 վարչական ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ վարչական վարույթի ընթացքում ձեռք չեն բերվել համապատասխան ապացույցներ հիմնավորելու համար քաղաքացի Ռուդիկ Քոչարյանի կողմից առանց պետական գրանցման կամ հարկային մարմիններում հաշվառման կանգնելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը: Մասնավորապես, սույն գործում առկա նյութերի վերլուծությունից Հանձնաժողովը հանգեց եզրակացության, որ միակ ապացույցը, որը հիմք է հանդիսացել քաղաքացի Ռուդիկ Քոչարյանի նկատմամբ կազմված վարչական ակտով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տուգանքը կիրառելու համար հանդիսանում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ՀՀ տրանսպորտային տեսչության 09.04.2013 թ-ի տեղեկությունը, որն ըստ էության ընդամենը տեղեկատվություն է Ռուդիկ Քոչարյանի կողմից իրացված գույքի (անվանում, իրացման գին) վերաբերյալ:

Հանձնաժողովի համոզմամբ սույն գործի վերաբերյալ որոշում ընդունելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 25.11.2008 թ-ի թիվ 020.0780 որոշման 7-րդ կետում ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից բացահայտվել է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը: Որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Այնուհետև հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածին նշել է, որ ձեռնարկատիրական գործունեության, որպես տնտեսական առանձին գործունեության, բովանդակության իրավական բնորոշումից բխում է, որ այն անձի՝ ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

« օրենսդրության վերլուծությունը միաժամանակ վկայում է, որ <ձեռնարկատիրական գործունեություն> հասկացության բովանդակությանը բացահայտված է նաև <Հարկերի մասին> « օրենքի 26-րդ հոդվածով:

Նշված օրենքներում <ձեռնարկատիրական գործունեություն> հասկացության վերաբերյալ դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ այդ հասկացությունն ունի հետևյալ հատկանիշները.

- հանդիսանում է տնտեսական գործունեություն,
- հետապնդում է շահույթ /եկամուտ/ ստանալու նպատակ,
- իրականացվում է ինքնուրույն և իր ռիսկով,
- իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց,
- ենթակա է պետական գրանցման /առանձին դեպքերում՝ նաև լիցենզավորման/,
- չի ներառում քաղաքացիների անձնական գույքի /ներառյալ նաև անշարժ/ և իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- իրականացվում է պարբերաբար:

Հարկ է նշել նաև, որ <ձեռնարկատիրական գործունեության> հասկացությունը նման ձևով է մեկնաբանել նաև « վճռաբեկ դատարանն իր թիվ 1161(ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թ-ի որոշմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ անձի գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար անհրաժեշտ է որպեսզի դրանում առկա լինեն « Սահմանադրական դատարանի 25.11.2008 թ-ի թիվ 020.0780 և « վճռաբեկ դատարանի 01.08.2007 թ-ի որոշումներում հիշատակված բոլոր հանգամանքները, սակայն քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ռուդիկ Քոչարյանի կողմից գույքի իրացման գործարքն որպես ձեռնարկատիրական գործունեություն որակելու համար ընդամենը հիմք է ընդունվել « տրանսպորտի և կապի նախարարության « տրանսպորտային տեսչության 09.04.2013 թ-ի տեղեկությունը, առանց պարզելու ձեռնարկատիրական գործունեությունը բնութագրող վերոգրյալ հատկանիշների առկայությունը:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ չի հիմնավորվել Ռուդիկ Քոչարյանի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը: Ավելին, սույն գործում առկա նյութերի և ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում Ռուդիկ Քոչարյանի կողմից պարզապես օտարվել է իրեն պատկանող անձնական գույքը: Այս կապակցությամբ հարկ է հիշատակել «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն. «Հարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների՝

ա) անձնական գույքի (ներառյալ նաև անշարժ) և իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ...»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել « ԿԱ ՊԵԿ ՕԿ 123 08.2013 թ-ի թիվ 1411293 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ